

րենց այսչափ մօտ եղող գիւղի վրայ իսկ ուշադրութիւն չեն դարձրել, Մուսուսմարցիք հայ գիւղացիների աւանդական սովորութեան հակառակ հիւրասէր չեն, մեծ թւով պանդխտում են, երկրագործութիւնից զատ չարմատարութիւն (ձիապան) նոյնպէս անում են: 116 տուն են՝ բոլորը հայ, Մուսուսմարումն է Աներեղիթ անուն ուխտատեղին, Թաւրիզից եկող ուխտաւորները գիշերը այդ մատուռում են քնում, որպէս զի բժշկուին, Այստեղ կայ և հանքային ջրի աղբիւր:

Ալշամուլք Մուսուսմարից 5 վերստ հեռաւորութեան վրայ 36 տուն հայ բնակիչ ունի, հիւրասէր են, ունին եկեղեցի և քահանայ, Անցեալ 1897 թուի Սայմաստում կատարուած դժբաղդ դէպքերից յետոյ, երբ պարսիկ կառավարութիւնը Օսմանցւոց պահանջմամբ ուղեց զաղմականներին Ղարաղաղի թրքաւնակ գիւղերն ուղարկել՝ Թաւրիզի Առաջ. Տեղապահ բողոքների հիման վրայ Թաւրիզում արգիլուեցան և ի վերջոյ այս երեք հայաբնակ գիւղերն ուղարկուեցան ձմեռն անցկացնելու համար, Տեղապահ Տօր հանգանակութիւնով, Թաւրիզի Հայուհեաց ընկ. նպաստներով և Թաւրիզի հայոց անհատական նուիրատուութիւններով այս գաղթականները իւզով ու բրինձով ապրեցին և գարունը բացուելուց յետոյ հեռացեալ Թաւրիզ և Սալմաստ վերադարձան, ուր ապրելն աւելի հեշտ է և որ սահմանակից է իրենց հայրենիքին:

(կը շարունակուի).



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ԵԱՂՐԱՄՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ.*

Մարդու մաւոր զարգացման մակերեւութի համեմատ՝ la blague-ը այլեայլ կեր-

* Յայտնի քանաւոր Մաքս Կոքսը և Լուիս Բրասարակը է. „Psychologie de la blague“ յօդուածը: Թրանսիական la blague քաւոր ուրիշ լեզուով չի քաղցանկում և նշանակում է միակցամայն անհանդիման, ստորին, անգգաւորին, առասպելա յօդուորին, խոխապանքուորին, ծաղր, որ բոլորը ի միասին մեր մարդկայական անհեռաւորին քաւոր է արտայայտում է և որովհետեւ սուս փաղափարքները

պով է յայտնվում: Գռեհիկ ամբոխի մէջ — այդ յատկութիւնը մի տեսակ ստուգութիւն և զրախօսութիւն է՝ համեմատ խեղկատակութեամբ և խորխուրտեամբ այն անձնաւորութեան դէմ, որին որ ծաղրել և կծել են ուղղում: Բաւական է, որ ծաղրածուն ունենայ շատ ու քիչ անսանձ երեւակայութիւն և անըզգամ լեզու: Ժողովրդական իմացմամբ la blague-ը նշանակում է մի հտպիտ և միմոս, որ միշտ ձգնում է խաղք ու խայտառակ անել անրիծ և ալմաս մարդուն, մեծ պատիւ համարելով, որ կարողանում է ամբոխի ծիծաղը շարժել, բայց այդ բառով նկարագրում են նաեւ այնպիսի շողակրատ-շարլատանին, որ ծաղր ու ծանակի հնարքով ձգնում է ստակ դուրս քաշել միամիտներից և ամօթխածներից, որոնց շփոթեցնել և վախեցնելը դժուարին բան չէ:

Իսկ փոքրամասն իմացական դասակարգի զաղափարով՝ la blague-ը մի տեսակ երգիծանութիւն և սատիւրա է, որի նպատակն է յայտնի անձնաւորութիւններն ու սրբութիւնները ծաղրալի կացուցանել, բուն իսկութիւնը եղծանելով, ծեքելով և նշաւակելով: Այսպիսի խնդումը մասամբ աւելի բարձր կարգի է, քան սիւնքորի բիրտ մօրստութիւնը, բայց հարկաւոր է, որ մարդ վայրիվերոյ դիտելու շնորհք ունենայ, անգութ լինի և սարսափելի ինքնահաւանութեամբ ծարաւուած լինի: Ծաղրողը ոլիմպիական բարձրութիւնից է նայում իւր ծաղրած մարդու վերայ: Իւր երեւակայութեամբ՝ նա ինքն իրան զգում է «փառահեղ» ծիծաղականի բարձրութեան վերայ, որի տակը իբր թէ չնչին արարածներ են սողում: Նորա աչքում ծիծաղելի և անարգական է այն ամենայն, ինչ որ իւր անձ-

մեր ընկերական կեանքի և մամուլի մէջ մեցրել է նաեւ la blague-ը, դասակարգ զիտով ու փառացած արտով մեծ մեծ շարդիլը, որ որ քաղի անհեռաւորինից ուրիշ աւելի քաւեւանութիւն չի պահանջում, այսինքն ոչ զիտութիւն, ոչ մեքի խոռութիւն, ոչ քաղանդ և ոչ ուրիշ առաւելութիւն, այս ուրեմն աւելորդ չէ այդպիսի հոգեկան վիճակի համառօտ կարագրութիւնը շեշտ, մանաւանդ որ այդ ծագում է մի անհամար գրից: Նա իւր մասնագիտութեամբ թփշիկ վիճելով, հասկանալի է, որ յօդուածին տուել է իւր մասնագիտութեան դրոշմը:

նախան ծաշակին, իւր յեղյեղուկ համոզումներին, նախապաշարումներին կամ արամագրութիւններին չի համապատասխանում: Մեծամտութիւնը նորան այնպէս է կուրացնում որ նա չի նկատում իւր արդարեան պարզամտութիւնը չի նշմարում որ անձնապաշտութիւնից ուռել է, ուստի և համոզուած է, թէ ամէն բանի մասին անսխալաբար դատելու կանոնը միայն իւր խելքի մէջ է հաստատուած: Հետեւաբար կատարեալ իրաւունք ունի անարգել և ծաղրել ինչ որ այդ եսական կանոնին հակառակ է:

Զարմանալ պէտք չէ, եթէ այսպիսի blagueur-ը (աներեսը) ինքն իրան խաբում է և մտորեցնում, դատարկապաշտ և արամաքների բոխքը միշտ այդպէս է եղել: Աւելի զարմանալի է դոցա ներգործութիւնը շրջապատողների վերայ: Միթէ յայտնի չէ, թէ անձնապաշտութեամբ դատողը իւր ծուլամտութեամբ իրերի էութեան երբեք խելամուռ չեղողը այն սահմանափակ արարածը, որ ոչ իւր խելքով մտածել զիտէ, ոչ անաշատ է, ոչ ցանկութիւն ունի նոր երեւթները ծանաչելու և ըստ այնքով վարուելու, և ոչ հանդուրժել կարողանում է իւր կշիռն ինչ որ իրան նման չէ— միթէ յայտնի չէ, ասում ենք, որ այդպիսին շատ անգամ սկսում է իշխել ուրիշների վերայ և աղղեցութիւն ունենալ բազմութեան վերայ: Սակայն անհասկանալի պիտի թուար այն երեւոյթը, եթէ մեզ յայտնի չլինէր, թէ ամբողջ որ աստիճանի անուղղայ է խնայականապէս և թէ նա երբեք վեր չի կլում միջակութիւնից և բխամտութիւնից: Նորա կարծիքով ծաղրը խիստ երեւիլի և զուարճալի բան է, քանզի շողշողուն, թեթեւաթուղ և վտանգաւոր զէնք է. ծաղրը նման է կայծակնափայլ փետուրներով զարդարած, մահաբեր և պողպատե սլաքին: Ծաղրողը— մի մանուկ Դաւիթ է, որ մի հարուածով, մի ծարպիկ շարժմամբ գետին է գլորում Գողթաթին, կամ մի սրամիտ արլէկին է, որ իւր խայտարղէտ հապկտութիւններով զիտէ քաջապէս ձոխանալ զիտէ անպատիժ կերպով կծել և խայթել, ծաղրի տակ է մնում— միայն շաշ. Գիգոյին, թանձրամիտ փղշտային: Ամբողջ ծաղրին պանծալի անուներ է տալիս զոր օր. «ծի-

ծաղ վրիժառութեան» (le rire vengeure) և այլն:

Բայց եթէ քննենք բոլոր ծաղր ու ծաշակութիւնները, որոնք նայն իսկ պատմական հոշակ են ստացել, մենք կը համոզուինք, թէ անոնք, առանց բացառութեան, ամէնքն էլ անհամ խաղեր և անմտութիւններ են: Թիշենք լոկ միայն, թէ անաղ անող ապուղնաները ինչպէս են ծաղրել Զէնների ծաղկի պատուաստը, շաքարի սկզբնական մուշքը, առաջին երկաթուղիներն և այլն: Միթէ այդ մեծարան խելատակները այժմ չեն թուում ողորմելի ապուշներ և չեն կոչվում կրէտիւններ: Նոյն իսկ մեր ժամանակներում մեր առաջ հանդիսացրել են մի ճիւղական պատկեր, ուր Լիտւէին կապիի ձեռով էին պատկերացրել, որովհետեւ դա առաջինն է եղել, որ Փրանսիային ծանօթութիւն է տուել Դարուինի մասին, որ երբեք այն չի պնդել, իբր թէ մարդս ծագում է կապիից: Արդ միթէ այժմ կը զանուի՞ ուշք ու խելքը հաւաքած մի մարդ, որ չկարմրի, թէ ի՞նչ ընդունելութեան է արժանացել այնչափ յաղթանակող վարդապետութիւններից մէկը, բարեշրջութեան վարդապետութիւնը: Ընկ կուզենայ ընկերանալ Արիստոփանին, որ նորա հետ ի միասին Սոկրատէսին ծաղրէ: Իսկ ես հաւատում եմ, որ (ամուսնութեան սրբութիւն բարբառող) սենատոր Բուրժէի վերայ այսօրուայ խնդացողները, որոնք նորան սրամտութեամբ կոչում են „le Père La Pudeur“ (Հայր Զգաստութիւն), քիչ ժամանակից յետոյ կը դատուին այն «պերճապանոյճ» հանճարներ, չարքում որոնք այնչափ աղուաբար խնձրացել են «խելացնոր» Պաստեօրի վերայ, որ ամէն տեղ և ամէն բանի մէջ երեւակայում էր ժանտագործ, գազանաշունչ, մանրիկ արարածների որջեր:

Այս օրինակները մեզ պէտք է զգուշացնեն կատակախօս կոչուածներից և կարող են համոզել մեզ, որ աւելի խելացի և արդարութիւն է նոյն իսկ ձանձրալի տափակամիտների կողմում մնալ, քան թէ զուարճաւոր սրամիտների հետ ձեռք ձեռքի բռնած ընթանալ:

Մէկն ասել է, թէ «Փրանսիայում ծաղ-

ըը սպանիչ է: Բարերախտաբար այսպիսի կարծիքներ տարածում են միայն նոյն իսկ երգուեստ միմասերը: Ժողովը երբեք չի կարող սպանել այն բանը, ինչ որ կենսական զօրութեամբ է ստեղծուել, բայց անշուշտ միշտ արատաւորում և անուանարկում է նոյն իսկ ծաղրողին:

Ժիծաղը կասկածական ազդեցից է, և ով որ ծիծաղին կարեորութիւն է բնծայում, նա իւր գաղափարութիւնն է մերկացնում:

Ասում են, թէ «Ժիծաղը յատուկ է միայն մարդուն»: Այս խօսքի մէջ փոքր ինչ անձնորոշութիւն կայ: Մարդակերպ-կապիկները նոյնպէս ծիծաղում են: Սոքա լոյնացնում են բերանը, վեր են քաշում շրթանց անկիւնները և այսպիսի միմական շարժում օժգնելով միմասունում են խօսքու կոկորդաձայն շշնջիւնների, ճիշդ ինչպէս 8—10 ամսական երեխան է անում: Բայց եթէ ենթադրենք անգամ թէ ծիծաղը երեւում է միայն բարձրագոյն կարգի կենդանեաց մէջ, ապա պէտք է այն ևս խոստովանենք, թէ ծիծաղը մարդկային վեհագոյն բնութեան արտայայտութիւն չէ, այլ ընդհակառակ կենսաբանական աւելի ստոր նշան է:

Բնախօսական տեսակետից ծիծաղը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի քանի շնչառական և միմական միւլներների՝ առաւելագէս ստոժանի՝ անդրադարձ շարժումն, այն ևս նախընթաց գրգռի համեմատ: Այդպիսի գրգռ է զոր օր խտրումը, այսինքն մի այնպիսի անախակալ շօշափութիւն յարապոստ, որ ոչ մի բանական նպատակ չի ունենում, այլ լսի մի կատակ է կամ մի անմեղ-անվնաս քսամնեցուցում: Պատմում են, թէ Չինաստանում օտքի տակը խաղելով՝ լիկում և չարչարում են այնքան ժամանակ, մինչև որ մահապարտը համբերական ծիծաղից մեռնի: Բայց այս կարծիքը անհեղեղ է, վասն զի անհնարին և բնախօսութեան հակառակ իրողութիւն է յայտնում: Հէնց որ յարաբոստ շօշափումը թշնամական նպատակով է լինում և գոհը իմանում է, թէ այդ գործը չար մտքով է գործվում, այն ժամանակ խաղի զգացումը հանգչում է և խրադրանքը այլ ևս ծիծաղ չի ծնում: Ժիծաղ կարելի է յարուցանել ոչ միայն ֆիզիքական

խաղաղումով կամ մոլթը շօշափելով, այլ և մտաւոր խաղաղութիւն կամ եթէ ներքին է ասել, փոխաբերական խաղաղութիւն: Մի որ և է իմացական պատկերացումն, հոգեկան յղացումն կամ մտքերի անախակալ զուգորդութիւն՝ այնպէս է ներգործում ուշադրութեան կենդրոնների վերայ, որպէս կաշուի խտրումը և առջ է բերում նոյն անդրադարձութիւն, այսինքն ծիծաղ:

Ինչ որ նորութիւն է, այն հարկաւ անախակալ է յայտնվում և զարմացնում է, իսկ եթէ այսպիսի նոր երեւոյթը մի և նոյն ժամանակ անհասկանալի լինի՝ անմիտ և անխորհուրդ բան կը թուի, ուրեմն և ծիծաղ պէտք է զարթնցնէ, մանաւանդ եթէ ոչ մի սպառնական կամ վտանգաւոր նշան չունենայ: Մանուկներին և վայրենիներին ծիծաղեցնում է ամենայն բան, ինչ որ իրանց համար նորութիւն է, ինչ որ իրանց չի վախեցնում և չի զայրացնում: Զոր օր, Ստանկէյն պատմում է, թէ Կեդրոնական Ափրիկէի նեղրները ամեն անգամ ծիծաղից թուլանում էին, երբ որ նորան տեսնում էին գրեկաւ: Այդ ժամանակ նոքա խիստ զուարճալի էին գտնում Ստանկէյի մարմնի զիրքն ու նորա ձեռքի շարժումը, որոնց խորհուրդը չէին հասկանում, բայց այդ պատճառով այդ ամէնը իրանց թուում էր անմտութիւն, թէպէտ՝ անվտանգ:

Ապա ուրեմն հիմք ունինք ասելու, թէ ծիծաղը երեւոյթների չհասկանալու կամ ագիտութեան արտայայտութիւն է: Բանի որ հասկացողութիւնը աւելի է զարգանում, այնքան աւելի իմացայ ծանօթ են դառնում երեւոյթների օրէնքները, և հետզհետեւ վերջինները այլ ևս ծիծաղելի չեն թուում: Մինչև անգամ եթէ անմիջապէս և իսկոյնեւթ բմբռնելի չդառնան երեւոյթների պատճառական յարաբերութիւնները կամ նպատակները, անոնք այլ ևս իմաստացի խաղաղ զուրկ չեն համարուի, վասն զի բանականութիւնն արդէն վարժութիւն է ստացել անհասկանալին զանազանել և որոշել անհեղեղից: Սոյն իսկ երբ որ երեւոյթի կամ գործի անմտութիւնը ակներև բացայայտ լինի, անդրադարձութիւնը հեշտութեամբ ծիծաղ չի պատճառի, որովհետեւ ծիծաղ խափանող և զսպող զգացում է

Հանդէս դալիս Բանի աւելի զարգացած լինի ուղեղը մէջը այնքան աւելի զօրացած կը լինին զսպիչ կենդրոնները և այնքան աւելի ասոնք արգելք կը դնենք անդրադարձութեանց կամ անգիտակցական մղմանց արտայայտութիւններին: Այս է պատճառը որ ծիծաղի անտեղութիւնը միշտ յիմարութիւն է կոչուել:

Ասածներից հետեւում է, որ ծիծաղը բնաւ մտաւոր զարգացման նշան չէ, այլ ընդհակառակ յատուկ է միայն տկարամիտներին — փոքր մանուկներին, վայրենիներին, ագէտներին, մեծ աղայամիտներին: Բարձր զարգացման տէր մարդը ինքնին լուրջ է, այսինքն իւր մտքի գործունէութեան բնական պայմանների պատճառով: Իսկ եթէ նա բարձրագոյն ծիծաղէ և քահ քահ կարկաչէ, այդ այն ժամանակ կը պատահի երբ որ կորցնէ բնական պայմանները, երբ որ թուլանան իւր զսպիչ կենդրոնները, երբ որ խոնջացած լինի կամ թունաւորած, զոր օր, երբ որ օղիի ներգործութեան ներքոյ լինի: Մինչև որ իւր ուղեղի բարձրագոյն կենդրոնները կատարեալ ուժով գործում են, անոնք չեն թողնում որ խնդութիւնը այնպէս թունդ բռնկի, որ նորան մոլորեցնեն երեւոյթները ուշի ուշով դիտելու և վերլուծելու սովորութիւնից:

Մի ապացոյց ևս, թէ ծիծաղը հոգեկան գործողութեանց մէջ ստոր նշանակութիւն ունի, այս է: Ծիծաղը ծնում է առաւելապէս ստոր պատկերացումներից, վաւաչական յարաբերութեանց և բնական պակասամտութեան մասին լիտի պատկերացումներից: Մարդիկ քրքջում են, լսելով անպարկեշտ պիղծ առակներ, անխելք պատմութիւններ և ընդվայրամիտ սրամտութիւններ և բառախաղեր, որով երևում է, թէ ծիծաղը մեծ հակում ունի դէպի դռհկութիւն, անպատշաճութիւն և անվայելութիւն, դէպի ամէն տեսակ ցածութիւն, անդրաստութիւն և ամարդութիւն:

Ասում են, իբր թէ, վեհութիւնից մինչև ծիծաղականը միայն մի քաջ տարածութիւն կայ: Ոհ, ինչ ողորմելի մոլորութիւն: Իսկապէս այդ երկուսի մէջ հեռաւորութիւնը — անհուն է: Ծշմարտութիւնն այս է, թէ միայն վեհութիւն ըմբռնողը զգում է նաև

վեհութիւն, իսկ վեհութեան վերայ ծիծաղելու սիրտ ունի այն մարդը որ վեհութիւն հասկանալու խելք չունի:

Գեղասիրութեան աստիճանաւորութեամբ նշանակութիւն ունին երեք կարգի արուեստներ, որոնց նպատակն է ծիծաղ շարժել — յումորական, սատիրական և միմոսական արուեստը:

Եւմորը մտաւոր կենաց մէջ խիստ որոշ տեղ է բռնում: Եւմորը յարուցանում է ոչ թէ ծիծաղ, այլ ժպիտ՝ հետը կցորդած իրան ներդաշնակող մի տրամութիւն ևս: Ինչ որ սխալ համարեցինք ծիծաղի նկատմամբ, այն ստոյգ է ժպիտի վերաբերութեամբ, վերջինս իրօք յատուկ է միայն մարդուն: Ուրախութիւն արտայայտող այս երկու երեւոյթներն մէջ՝ ոչ միայն որակի տարբերութիւն կայ, այլ և էական զանազանութիւն: Եւմորը կուպիտ և բիրտ կենդանական խնդում չէ, այլ հոգեւոյ նուրբ աղնութեան արտայայտութիւն: Հայնէն ասել է, թէ յումորի տոհմային զինանշանի մէջ գեղածիծաղ արցունք, կայ: Այս անյաջող և աղօտ նմանութեամբ նա յայտնում է զուտ ճշմարտութիւն, նա իմացնում է, թէ յումորի մէջ խնդութեան հետ խառնուած է տխրութիւն: Եւմորիստը իրականութիւնը համեմատում է իրէպի հետ, երեւոյթը՝ օրէնքի հետ, և անհատը՝ նախազաղափարի հետ: Նա նկատում է իրականի անկատարելութիւնը՝ գաղափարով լինելիքի համեմատութեամբ, կշռի երկու թաթի մէջ է զնում այն՝ ինչ որ է և այն՝ ինչ որ պէտք է լինէր, և այս համեմատութիւնից զգայւում է որոշ անպատշաճութիւն, որով գոյանում է հոգեկան խաղանք: Եւմորը անմատչելի է այնպիսի մարդուն, որը որ կարողութիւն չունի իրերի վերայ նայելու յաւիտեականութեան տեսակէտից և որը որ չի տանջվում անոնց ստորութիւնից, ցածութիւնից և ոչնչութիւնից: Ցանջուիլնիւթական կարիքներից, լիովին զգալ անոնց դառնութիւնը և մի և նոյն ժամանակ պահպանել դատողութեան պայծառութիւն և բաւական իմաստութեան հայեացք կեանքի մասին, որպէս զի ըմբռնենք անոնց ունայնութիւնը — ահա այն հոգեկան վիճակը, ուր որ

յուժորը տեղի կարող է գտնել: Ապա ուրեմն յուժորը հանդիսացնում է իւր յաղթանակը իրերի վերայ, բանականութեան յաղթանակը զգայականի վերայ:

Յուժորի մէջ սէր կայ: Անհնարին է մի իրի յուժորական կողմերը տեսնել և մասնացոյց անել՝ առանց կարեկցելու և վշտակցութեան: Այս բանից գլխովին տարբեր է սատիւրան, որին ընդհակառակ միշտ կցորդակից է առեւութիւնը կամ գէթ խորշումը: Յուժորը շարժում է մեր գութը իսկ սատիւրան՝ մեր թշնամութիւնը, մեր հալածատիրութիւնը: Վերջինս առնչութիւն ունի մեր շարժողութեան ճիշտ արհամարհական և ժանտաժուտ ծիծաղով: Յուժորը ամէն տեսակ թուլութիւնների և մեղանշութիւնների բարեխօս-փատաբան է, անկիշատակ չի թողնում մեղմացուցիչ հանգամանքներ:

Սատիւրան միշտ անոնց ամբաստան — դատախազ է, միշտ հալածում է, միշտ պահանջում է դատապարտութիւն: Սատիւրան մասամբ փորձական բնութիւն ունի, որ նենգաւոր հնարներով գիտէ աղնուախորհ սրտում կասկածներ և հակակրօնութիւն զարթեցնել: Սատիւրան ծնունդ է ցասման և զայրութիւն ինչպէս ասում է Յորնաղրը *facit indignatio versum*, բայց ոչ թէ բարոյական զայրութիւն, որ հանաք չի անում, որ կայծակի պէս է որոտում և հարուածում, որ հրաշունչ է և ահեղ, որպէս Սասյի մարգարէ, որպէս Բարիէ իւր «մեծակերջ» ներով, որպէս Վիկտոր Հիւգո „*Châtiments*“-ի մէջ: Իսկ այն զայրոյթը, որ էպիգրամ (վերտառութիւն) կոչուած խածանոց բանաստեղծութիւններ է շարադրում, շատ շատ համարուի լոկ միայն մի գեղասիրական զարշումն, մի թեթև վրդովում անզգամութեան դէմ կամ ինքնասիրութեան դիպած վիրաւորանքի պատճառով: Սակայն ինչ և լինի սատիւրա թեւադրող զգացումը՝ մեծաւ մասամբ վեհագոյն զգացումների կարգից չէ: Սատիւրան ցոյց է ապրիս միայն, որ հեղինակը յուզուելու՝ ուրեմն և ալեկոծուելու՝ ընդունակութիւն ունի:

Այս էլ մի առաւելութիւն է, որ սատիւրայի մէջ կայ գոնէ և՛ ջերմութիւն և՛

զգացումն, իսկ միմտական ծաղրածութեան մէջ ջերմութեան հետքն անգամ չկայ, անշունորհք և անամօթ ծաղրը սառուցի պէս դուրս է: Ծաղրածութեան գլխաւոր պայմանն է անտարբերութիւն դէպի ծաղրած երեւոյթը, սե ու սպիտակի գինը մէկ է անոր առաջ, քամահութեան լեզու ցոյց կու տայ անխտիր և՛ առաքինութեանը և՛ մոլութեանը: Համակրօնութիւն և հակակրօնութիւն զգալու և հասկանալու իսպառ անընդունակութիւնից միայն կարող է կազմուիլ հոգեկան այնպիսի վիճակ, որով մարդ սիրտ է առնում ամենալուրջ և հրատապ խնդիրների դիմաց՝ զուարճանալ անհամ հանաքներով և սրախօսութիւններով: Խեղկատակը, ծաղրածուն — սա այն ազատանուած իմաստակն է, որ կենսական տառապանքներից թշուառացած էակները՝ խիստ ձեռնտու նիւթ է համարում իւր կատակների համար, և որ այդ դէպքում գաղափարների զուգորդութեան այնպիսի մեթոդ է դործ գնում, որով իրերի էական կողմերը քաջաբար արհամարհելի է կացուցանում, որպէս զի լոկ միայն արտաքին պատահական և երկրորդական կողմերի նմանութիւններով՝ ուղած խաղք ու խայտառակութիւնը կցկցէ, այդ նպատակին ծառայում զոր օր, բառախաղի յարմար ձայնական նմանութիւնները կամ տրամարանութեան հակառակ այնպիսի համեմատութիւնները, որոնք իրանց անակնկալ անմտութեամբ ծիծաղական ազատութիւն են դործում և այլն: Սակայն ծաղրելու համար բռնական չէ լոկ միայն կատարելալ անտարբերութիւն, որով միտքը սանձարձակութիւն է ստանում ամէն տեսակ անհեղեղութիւն կցկցելու համար: Ծաղրը միշտ կծել է ուղում և անոր նպատակն է բարոյապէս խոշտանգել, այն ևս ամենայն անգթութեամբ: Ուրեմն եթէ մարդու սիրտը հովանում է, երբ որ տեսնում է ուրիշի տանջանքը կամ երբ որ միայն մտքովն է անց կացնում այդպիսի պատկեր, — ահա դա կունենայ ծաղրելու սէր: Զուարճութեան այսպիսի արտայայտման կոչում է սաղիզման տիրանիզմ, բարոյապէս հարստահարելու, բարոյապէս չարախնդարու բնոյթը: Ծաղրածուն ուրեմն պէտք է հարուած և ըմբռնուած լինի բարոյա-

կան անզգայութեամբ, հոգեբանական սաղիզմով, ախտացած պէտք է լինի մի տեսակ մտաւոր ծառի թեւերը ուր որ գաղափարները զուգորդուել կարող են իրանց նուազ էական նմանութիւններով: Բայց այսպիսի անձնութեանը որի մտածողութիւնը անկանոն է, որ հասկանալու և զգալու ընդունակութիւն չունի, որին անգթութիւնը խնդութիւն է պատճառում—արդէն ինքնին հիւանդանոցների մի որոշ տիպ է ներկայացնում: Կատարեալ կերպով հոգեով այսպէս հիւանդացածը վազուց կոչուել է «բարոյապէս խելագար»:

Եւ ուրեմն փոխանակ այդ հիւանդութիւնը սահմանելու, մենք կը թուենք իւր ախտացոյց նշաններն և ասում ենք, թէ աներես ծաղրամոլութիւնը, որ անմեղ հանաքի հետ չը պէտք է շփոթուի—թէ շարունակ և սովորութիւն դարձած ծաղրամոլութիւնը ոչ այլ ինչ է, քայքայեալ խելագարութեան ստորնագոյն ձևերից մէկը:

Ս. Մ.



ՄՁՏՆՋԵՆԱԿԱՆ ՕՐԱՅՈՅՑ.

Այս օրացոյցը կազմել է մեր հայրենակից յայտնի ճարտարագէտ պ. Գրիգոր Հովուեան, որ իւր մտանադիտական բազմաթիւ գրաւոր հեղինակութիւններից զատ իմիջիպէտ զբաղուած լինելով այս խնդրով և հրատարակած ունենալով արդէն ֆրանսերէն տախտակը՝ հաճեցաւ սոյն հայերէնը պատրաստել Արարատի համար: Օրացոյցին գործադրութիւնը գիրքացնելու նպատակաւ հեղինակի ցուցմամբ այս մի քանի բացատրութիւններն ենք տալիս:

Ինչպէս տախտակը ցոյց է տալիս՝ վերի ձախատում ձախից աջ միմեանց յետեւից շարուած են եօթներեակները և ապա Զրիստոսից առաջ և յետոյեկող տարեթուերը: Զախ կողմը եօթներեակներից ցած դարերի սիւնակն է՝ Յուլիան և Գրիգորեան տումարների և այն բարեփոխութեան համեմատ, որ հեղինակն

ստաջարկել է Փրանսիայի աստղագիտական ընկերութեան: Մէջ տեղը ամիսներն են, աջ կողմը տարուայ եօթներեակները, ներքեւը շաբաթուայ օրերը, իսկ աջ անկիւնում ամսաթուերը:

Այս տախտակի գործածութեան համար միայն բաւական է տարուայ եօթներեակներն իմանալ, որ կարգով յաջորդում են իրար, օր, այս տարուայ եօթներեակը Դ. է, անցեալ տարուանը Գ. էր և եկող տարուանը Ե. պիտի լինի: Արդ, գիտենալով այս տարուան եօթներեակը Դ, փնտռում ենք նոյն գծի վերայ շարուած ամիսները՝ օր, յունիս, որի սիւնակից ցած իջնելով գտնում ենք շաբաթուայ օրերը և նրանց հանդէպ աջ կողմը ամսաթուերը, և այդպիսով իմանում ենք, որ ամսի մէկը երկուշաբթի, երկուսը երեքշաբթի է և ընդ

իսկ եթէ պէտք լինի անցեալ կամ ապագայ մի տարուայ եօթներեակը գտնել՝ հարկ է նոյն թուականը երկուսի բաժանել. դուրը և տարիներ միմեանցից զատելով: Օրինակ 1658 բաղկանում է 16 դարից և 58 տարուց, դարերի շարքի մէջ գտնում ենք 16, իսկ տարիների շարքի մէջ 58 և Պիւթագորեան աղիւսակի նման ձախ կողմում՝ եօթներեակների շարքում, իրար կարած տեղը գտնում ենք Ե. գիրը, որ 1658 թուի եօթներեակն էր: Ապա նոյն կարգով կարող ենք գտնել, որ և է ամսի որոշեալ օրը կամ թուականը: Մի ուրիշ օրինակ. կամենում ենք իմանալ 1999 թուականի ապրիլի 7-ը (աւետեաց տօնը) ի՞նչ օր է: * Այդ թուի եօթներեակը Ե. է, իսկ ապրիլի 7-ը չորեքշաբթի: Ուրիշ օրինակ. 1426 թ. օգոստոսի երկրորդ կիրակին ամսի քանի՞ն էր: Նախ կգտնենք եօթներեակը, որ Բ. է և կտեսնենք, որ երկրորդ կիրակին 11-ին էր: Նոյն թուականի հոկտեմբեր ամսի մէջ քանի՞ չորեքշաբթի կար, կտեսնենք, որ հինգ էր 2, 9, 16, 23 և 30:

Նահանջ տարիները, երբ փետրուարը մի օրով աւելանում է, երկու եօթներեակ ու-

* Անշարժ օմերի օրերը փոխում են, քայքայեալ միայն մեկն է մնում, այն իմ, շարժականների օրերը մնում են մնում, ամառուերն են փոխում. հեղինակը յոյս ունի դրա համար եւս մի այսպիսի օտաւակ կազմել: